Հետազոտական աշխատանք

Գրականությունից

Թեմա- Կենցաղային ծանր պայմանների արտացոլումը Նար-Դոսի «Մեր թաղը» նովելաշարի հերոսների ճակատագրում

ՀՀԿԳՄՍՆ «Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

Վերապատրաստվող՝ Էմմա Իսրայելյան Սարգսի

Տվեց, բայց չստացավ: Երազեց, երազն էլ երազ մնաց:

Ինչքա՜ն շատ մարդ է կյանքից գնում՝ կյանքին պարտական

Եվ ինչքա՜ն քչերը, որոնց ինքը՝ կյանքն է մնում պարտք:

Ահա դրանցից էր Նար- Դոսը:

(Գայանե Մկրտչյան)

Նար-Դոսը հայ արձակի վարպետներից է: Նա տեսավ ու պատկերեց քաղաքային կյանքի պայմաններում ապրող մտավորականության ու արհեստավորության ծանր առօրյան և այդ ամենը դարձրեց պատմվածք, վեպ ու վիպակ :

Նար-Դոսը ռեալիստ գրող է: Նրա համոզմամբ՝ ստեղծագործողի պարտքն է արտացոլել կյանքի ճշմարտությունն առանց աղավաղելու : Նա այն կարծիքին է, թե ստեղծագործողը ոչ միայն ճշմարտացի պիտի արտացոլի կյանքը, այլև պիտի տա հասարակությանը առաջնորդող գաղափարներ: Այդ կապակցությամբ նա արտահայտել է մի պատկերավոր միտք, թե գրականությունը հայելի է, բայց այնպիսի հայելի, որ եթե ցույց է տալիս ճակատիդ մուրը , պետք է հուշի նաև այդ մուրը սրբելու միջոցը: Նար-Դոսի լավագույն երկերը գրված են այս սկզբունքով:

Նար-Դոսը արտաքին միջավայրի լայն պատկերները չի ներկայացնում, այլ հոգեբանական մանրամասն վերլուծություններով խորանում է իր հերոսների ներքին աշխարհի մեջ, և իրականությունը տեսնում ենք՝ արտացոլված հերոսների ներաշխարհում:

Մեր գրականության մեջ Նար-Դոսին ընդունված է համարել հոգեբանական ռեալիզմի հետևորդ:

Դրանով են պայմանավորված նրա ստեղծագործություններում կիրառվող գեղարվեստական հնարանքները: Նա սովորաբար հեղինակի անունից երրորդ դեմքով պատմելածևին զուգահեռ գործում է նաև նամակի, հիշատակարանի, օրագրության, մենախոսության և այլ եղանակներ, որոնք հոգեբանական վերլուծությունների ավելի լայն հնարավորություններ են տալիս:

Իր ստեղծագործական ծրագրերի մասին նա այսպես է արտահայտվել. «Իմ գրվածքներում ես ուզեցել եմ պատկերել առհասարակ մեծ քաղաքի խուլ թաղերում իրենց ողորմելի կյանքը քարշ տվող, խեղճ, աղքատ դասակարգի չարքաշ կյանքը, այդ դասակարգի մեջ տիրող թանձր խավարը, նախապաշարումները... այնուհետև նույն քաղաքի մեքշանական և մանրաբուժական ընտանիքի կյանքը, մեր հասարակական հոսանքների բախումները, մեր ինտելիգենցիայի զանազան ներկայացուցիչների տիպերը»:

Այս ծրագիրը նա իրականացրեց ամբողջությամբ՝ միջավայր ունենալով իրեն շատ լավ ծանոթ Թիֆլիսի քաղաքային կյանքը: Արհեստավորության կյանքին են նվիրված «Մեր թաղը»պատմվածաշարի գործերը , իսկ մտավորականության կյանքը Նար-Դոսը պատկերել է «Սպանված աղավնին» վիպակում, «Պայքար», «Մահը» վեպերում և մի քանի պատմվածքներում:

19-րդ դարի 80-90-ական թվականների հասարակական կյանքի հեղաբեկումների պայմաններում , երբ քայքայվում էր նահապետական լճացած կյանքը, Նար-Դոսը հետևում էր մարդու ճակատագրին: Նրան հետաքրքրում էր, թե սոցիալական – հասարակական փոփոխությունները ինչպիսի անդրադարձում են գտնում մարդու բնաշխարհում:

Իսկ ի՞նչ է կատարվում մարդու , մարդկային անհատի հետ: Մի կողմից՝ վիթխարի տեղաշարժեր, մյուս կողմից՝ «փոքր», սակայն խորապես մարդկային տառապանք, մի կողմից՝ կոպիտ, սանձարձակ բարքեր, մյուս կողմից՝ ծայրահեղ զգայուն վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունենում շուրջը: Սրանք այն բոլոր մոտիվներն են , որոնք խաչաբեկվում են ,, Մեր թաղը ,, նովելաշարում :

Նոր հարաբերություններին վերընթաց ալիքով քաղաքի ծայրամասերն ու խարխուլ հյուղերը շպրտված մարդկանց անելանելի դրության նկարագրությունը Նար – Դոսի նովելներում վերաճում է մարդկային անհատի և պատմության անխուսափելի ընթացքի բախման մեծ խնդրի : Գրողը հասկանում է , որ նահապետական քարացած նախապաշարումների և սովորույթների խորտակումն անխուսափելի է : Մեծ ուժով է մերկացված եգոյների , ասատուրների ,արտեմների աշխարհի ներքին այլասերումն ու դատարկությունը : Նար – Դոսը երբեք չի կանգնում նահապետականության պաշտպանության դիրքերում :

Ընդունելով կապիտալիստական զարգացման պրոցեսի անհրաժեշտությունը, Նար – Դոսը գեղարվեստորեն բացահայտում է , թե ինչպես այդ ամենը ուղղվում է մարդու դեմ , ծնում մարդկային բազմապիսի ողբերգություններ : Իրադարձությունների ծանրությունը Նար – Դոսի հերոսները վերապրում են անբացատրելի սարսափով ու տագնապով : Նրանց ցավն ու թախիծը չի սահմանափակվում փոքրիկ դժբախտությունների շրջանակներում , այլ վերաճում է մարդու հոգևոր աշխարհի կորստյան իսկական ողբերգության :

՛,, Մեր թաղը ,, ընդհանուր խորագրի տակ ամփոփված են յոթ նովելներ : Շարքը բացվում է ,, Ինչպես բժշկեցին ,, նովելով : Այն սկսվում է իրականության նկարագրությամբ , որի մեջ թաքնված է թշվառության և վայրենացման սարսափը . ,, Մեծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկի թաղը : Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ – մուռտիկ փողոցներ , որոնք նեղլիկ անցքերով գնում խաչաձևվում են իրար կամ դեմ առնում մի պատի՝կույր մուրացկանի պես : Իրար վրա թափված , իրարու հենված տնակներ, որոնց խարխուլ լաբիրինթները թվում է , թե ամեն րոպե պատրաստ են թափվելու անցորդի գլխին : Փոքրիկ պատուհաններ ՝ կեսը ապակի , կեսը ՝ թղթած , փտած դռներ , հողածածկ , տափակ կտուրներ , որոնք ձմեռները տնքում են ձյունների ծանրության տակ , գարնանը ծածկվում փարթամ կանաչով և անձրևների ժամանակ կաթում , կաթում , ստիպելով խեղճ ու թշվառ բնակիչներին պատսպարվել ծալքերում , դռների և պատուհանների խոռոչներում , չուլ ու փալասների տակ ,, :

Այս հյուղակներից մեկում է ապրում ջուլհակ Թորոսը : Նրա հիշողության մեջ աղոտանում են այն օրերը , երբ ինքը առանց հոգնելու , սիրով ու խանդաղատանքով աշխատում էր դազգահի վրա . չէր հիշում արդեն , թե երբվանից է դադարել մխալ , դողդողալ մոմը ջահրայի ռիթմիկ հարվածներից : Ջահրան նրա միակ ուրախությունն էր , հույսն ու ապավենը : Այն ամենը , ինչ սուրբ էր ու նվիրական , ինչ տարիներ շարունակ ջերմացել էր աշխատանքի մարդու տաք շնչով , հիմա փոշով է ծածկված : Այս ամենը ներթափանցվում է թախծոտ մի երգով , որը դառնում է

սրտառուչ , առավել համակող : Անցյալի մեջ է սուզվում , մշուշվում և անհետանում նաև կնոջ կորստյան մորմոքը : Կյանքը , առանց խնայելու , քայլ առ քայլ ճզմում է նրան : Կերպարի հոգեբանական զարգացմանը զուգահեռ ավել է խորանում ողբերգությունը :Կյանքի հարվածների տակ կռացած ծերունի Թորոսը մի տարօրինակ երկյուղով է վերաբերվում դստերը՝ Մարթային , որը կյանքի վերջին տարիներն ապրող ծերունու միակ ուրախությունն է : Մարթան աստվածավախ է , բայց դա ավետարանական պատվիրանների կույր պաշտամունք չէ, այլ լավը , բարին ու գեղեցիկը պաշտպանելու յուրօրինակ ձգտում : Փայփայելով գեղեցիկը , նա դիմում է ոգիներին , երբ իրեն անզոր է զգում : Մանկությունից նրան ներշնչել են , թե մարդու աջ և ձախ ուսերին թառած հրեշտակն ու սատանան անընդհատ կռվի մեջ են իրար հետ . դրանցից մեկը միշտ մղում է դեպի բարին , իսկ մյուսը՝ դեպի չարը և պառկելով այն կողքի վրա , որ կրում է սատանային , ինքը չարին հարկադրում է ոչնչանալ :

Նովելի հոգեբանական հյուսվածքում Նար - Դոսը նրբորեն մոտեցնում է միմյանց Թորոսի և Մարթայի հոգեվիճակները : Թորոսի տառապանքը ավելի է խորանում՝ դստեր ողբերգական կորստի պատճառով :

Իրենց վշտի մեջ ներսուզված Թորոսի և Մարթայի կերպարները նովելում զարգանում են միջավայրից հեռու , օտարացած ու խորթացած շրջապատին : Դիմելով հոգեբանական նուրբ լուծման , Նար - Դոսն իր հերոսներին միջավայրի հետ բախման մեջ է դնում այն ժամանակ , երբ հայտնի է դառնում Թորոսի ողբերգությունը :

Մարթայի խելագարության մասին իմանալով , շրջապատողները անզուսպ կատաղությամբ ներխուժում են Թորոսի տնակը : Մի քանի ակնթարթում ամբողջ թաղով մեկ տարածվում է բոթը , ,, թե Թորոսանց Մարթան գժվել ա ,, : Բոլորը՝ մեծ ու փոքր , կին , աղջիկ , երեխա , ամեն ինչ թողած շտապում են Թորոսի տուն : Թորոսի ընտանիքի դժբախտությունը դառնում է ամբողջ թաղի

ուշադրության կենտրոնը : Մեծանում է միջավայրը և իր մեջ առնում Թորոսի և Մարթայի ողբերգական կործանումը :

Խավարի և թշվառության միջավայրում մեծ չարիք են սնահավատությունն ու տգիտությունը , վայրագությունն ու կոպտությունը , հարբեցողությունն ու բարոյական անկումը :

,, Սաֆուլն ուխտ գնաց ,, նովելը նույնպես սկսվում է նկարագրությամբ : Նար - Դոսը նկարագրում է կյանքի որոշակի մի անկյուն , ստեղծում է կենդանի , շնչող մի մթնոլորտ : Թեև նկարագրվում է անկյունը , բայց ամենուրեք ներկա է մարդն ինքը , զգում ես նրա բարի , չհոգնող մոր , հոգացող տանտիրոջ շունչը : Նար- Դոսը մեծ վարպետությամբ ստեղծել է կարիքի , աղքատության մթնոլորտ , որը լի է սագնապով , անհանգիստ սպասումով , ափսոսանքով , կարոտով , հույսով :

,, Դուրգար Սաֆուլը կամաց բաց արեց դուռը և ներս մտավ : Նրա կինը ՝ Նատոն , թևերը մինչև արմունկները քշտած ՝ պպզած էր հատակի վրա և լվացք էր անում կոծկած թարախում : Բուխարու մեջ կասկարայի վրա դրած կաթսայի տակ մի քանի բարակ փայտ էր ծխում : Հողե հատակի վրա բավական ցեխ էր գոյացել , և լվացքի սապոնոտ ջուրը տեղ – տեղ գուբ էր կապել : Սենյակի օդը հագեցած էր խոնավությամբ , սապոնաջրի և ծխի զարշ հոտով : Թախտի վրա դրած օրորոցի մեջ քնած էր ծծի երեխան ,, :

Սաֆուլի հետ կապված սյուժետային ընթացքից շեղվելով , Նար - Դոսը հուզական տրամադրությամբ ավելի է շիկացնում մթնոլորտը : Սաֆուլը լուռ է , և այդ լռության մեջ տխուր մխում է հանգչող կրակը , խոնավությունը սառնություն է տարածում նրա օջախում , իսկ գաղջ օդը պարուրում է նրա մանկան օրորոցը :

Նար – Դոսը նկարագրում է ոչ թե մի առանձին ձախորդություն կամ ուրախություն , այլ իր հերոսին , որը այստեղ հանդես է գալիս իր ներքին մղումներով , արտաքին հարաբերություններով ու կապերով , ամբողջ աշխարհով : Նահապետական վայրենի բարքերի , խաբուսիկ երազանքների

աշխարհը խամրում է , փշրվում , իսկ նորն էլ չի ծնում ոչ մի գաղափար : Իրենց դարն ապրած պաշտամունքները , պատկերացումները ու սովորությունները արտամղվում են , սակայն դրանց փոխարեն հաստատվում են սկզբունքներ , որոնք չեն ներդաշնակում մարդու բնական գեղեցիկ մղումներին :

Դժբախտությունը հետապնդում է կարիքից հյուծված Սաֆուլի ընտանիքին: Փրկվելու համար աստվածավախ Նատոն ու Սաֆուլի պառավ մայրը օգնություն են խնդրում Աստծուց , ոգիներից : Ոգիների երկնային զորությամբ են ցանկանում Նատոն ու Սաֆուլի մայրը կանխել վերահաս դժբախտությունը: Երբ Նատոն տեսիլքից սարսափած պատմում է Սաֆուլին իր երազը, վերջինս նույն անտրտունջ երկյուղածությամբ ու հնազանդությամբ է վերաբերվում պապենական հավատալիքներին :

Միջավայրը շնչավորելու վարպետությամբ Նար - Դոսը ,, ամենազոր ,, սուրբ Գևորգի պատկերի տակ հանգչող Սաֆուլին շրջապատում է հոգեկան մի վարակող տրամադրությամբ :

Սև , մռայլ ամպերը կախված են Սաֆուլի վրա : Վերմակի տակ փաթաթված , անտրտունջ հանգչում է Սաֆուլը : Այս պատկերում , երբ , ասես , տարերքը պատրաստվում է ողջ հզորությամբ պայթելու Սաֆուլի գլխին , հուզական անասելի ուժ է ստանում գրողի ցավը հերոսների անզորության և անպաշտպանության համար : Անձրևի սառը շիթերը ծորում են վերմակից ներս: Սաֆուլը դողում է հեղեղի անողորմ հարվածներից , սակայն սնոտիապաշտությունը շարունակում է իշխել ինքնապաշտպանության բնազդին : Սաֆուլի կինը ներքին անլուծելի խռովքի մեջ է : Սերը , Սաֆուլին փրկելու ցանկությունը բախվում են գրբացի պատվերը խախտելու երկյուղի հետ : Նրա հոգում անելանելի պայքար է : Սակայն հույսի ու հավանի ծայրահեղ լարվածության հասած այդ բարալիկ թելը կյանքը կոպիտ կերպով կտրում է , սրբում ու տանում հերոսների բոլոր պատրանքները :

Սաֆուլը մեռնում է . նրան չի օգնում սուրբ Գևորգի ,, բուժիչ ,, զորությունը : Մարդիկ ուշի են գալիս , որովհետև չի իրագործվում նրանց ամենանվիրական իղձը : Նրանց աչքերը բացվում են տառապանքով : Քարացած նախապաշարմունքները կոպտորեն ճզմում են , բզկտում Նար – Դոսի հերոսների ամենասուրբ զգացմունքները :

Հնամենի սովորություններով պարուրված նրանց մարդկային զգացմունքների վրա սկսում են ազդել նոր հարաբերությունները , մի նոր իշխանություն , որ չի ընդունում ոչ մի սրբություն ու օրենք և անողորմ կերպով հետապնդում , դուրս է մղում այն ամենը , ինչը թանկ է հոգուն : Մարդու անարգվածության , նրա շահերի ոտնահարման թեման հարստանում է նոր պատկերներով : Հանդես են գալիս Աստուրը , Դավիթը , Արտեմը , Ցագորը , որոնք չկարողանալով դիմագրավել արհեստավորական աշխարհի քայքայմանը , երկատվում եմ , ծռմռվում , կրում տիրող բարոյականության հուտի կողմերը : Հնից նորին անցնելով, Նար - Դոսի հերոսների հոգևոր անկախության առկայծումները ծածկվում են թանձր շղարշով . սկսվում է նոր կուռքերի փառաբանությունը , որ սրբում տանում է բարոյական ամեն մի սկզբունք ու չափանիշ , մատնելով մարդուն ֆմահանույքի տարերքին : Սկսվում է քաոսը : Մանրիկ մի բան հետը կարող է բերել մեծ դժբախտություն , բարձրն ու վեհը առանց ափսոսանքի ու ցավի կարող են իջեցվել ու համեմատվել մանրուքի հետ : Նար - Դոսի նովելները ՝ ,, Հոգուն վրա հասավ ,, , ,, Սև փողերի տոկոսը ,, , ,, Թե ինչ եղավ հետո , երբ շաբաթամանից երկու կտոր շաբաթ պակասեց ,, , արտացոլում են ներքին այն խառնաշփոթությունը , որ ապրում էին ժամանակակիցները :

,, Հոգուն վրա հասավ ,, նովելի առաջին իսկ տողերից մենք ընկնում ենք անհանգիստ մի միջավայր . ,, Ձմեռնամուտ օրերից մեկն էր : Մութը դեռ բոլորովին չէր կոխել երկիրը : Երկինքը պղտոր էր գարնան ջրի պես : Կատաղած քամին վժժալով ներս էր պրծնում փողոցի մի բերանից ,թոցնում էր առաջին պատահած մարդու գդակը , լիզում էր գետնից աղբն ու փոշին , ծեծում էր դռներն ու պատուհանները , բարձրացնում , պատով էր տալիս մանրավաճառի խանութի ճակատից

կախված ցուցանակն ու կորչում փողոցի մյուս բերանից : Լապտերավարը, սանդուղքն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին , վազում էր լապտերները վառելու... Ամայի փողոցում մի փոքրիկ շուն կուչ էր եկել մի փակ դռան առջև , սրթսրթում էր ամբողջ մարմնով ու կաղկանձում,, :

Աշնանային մշուշում կյանքը թվում է դուրս է եկել իր հունից : Ամեն ինչ անկանոն շարժվում է : Ջանասիրաբար վառված լապտերները մերթ աղոտանում են , մերթ առկայծում՝ տարածելով անփայլ լույս : Խելահեղ քամին փորձում է ամեն ինչ իրար խառնել, ջարդել ու փշրել : Քշելով անձրևախառն ամպերը ՝ քամին իրար է խառնում այն ամենը , ինչ միևնույն այդ թվում էր կանգուն : Բնությունը աստիճանաբար թոշնում է խամրում:

Այս խառնաշփոթի մեջ էլ հեղինակը ներկայացնում է Դավթի կերպարը , որին մենք տեսնում ենք այն պահին , երբ քամին ետ ու առաջ էր տանում նրան : Աշնանային քամու բերանն ընկած ՝ Դավիթը շարժվում էր առաջ : Սառը քամին խփում էր երեսին , անձրևախառն փոշին լցնում աչքերը , սպառնում գլխից պոկել գլխարկը : Քամին երբեմն այնքան ուժգին է գրոհում , որ Դավիթը ակամա կանգ է առնում և ամբողջ մարմնով թեքվում առաջ ,որ ետ չգնա :

Բնությունն իր տարերքի մեջ է ,և նախշքար Դավիթը այդ տարերքի ստրուկն է : Նա հայտնվել է կյանքի աղմկոտ հորձանուտում , և իրադարձությունների հոսանքը նրան ոլորապտույտի մեջ է առել, և , ենթարկվելով այդ ուժին , Դավիթը կորչում է որպես մարդ ՝ կորցնելով իր բնավորության յուրահատկությունը : Հոգեպես նա աղքատ ու մերկ է , իսկ արտաքինից ՝ զզզված , կեղտոտ , ցնցոտիներով :

Դավիթը հյուծվել է , սպառվել : Նա բթացել է : Նրան ոչինչ չի հետաքրքրում և անհանգստացնում : Նա դարձել է անտարբեր ամեն ինչի և բոլորի հանդեպ : Դավիթը անհանգիստ է , և այդ վիճակում նա հայտնվել է հոգեկան խռովքի , գրգռված վիճակի պատճառով : Մի կիրք ունի միայն ՝ հարբելու ծարավը , և իր ցանկությանը հագուրդ տալու համար նա ընդունակ է ամեն զոհողության ՝ վիզ ծռել , խոնարհվել ստրուկի պես :

Մեծ ափսոսանքով ու դառնությամբ է Նար - Դոսը վերաբերվում մարդկային բնավորության աղճատմանը : Հավատարիմ մնալով սեփական ստեղծագործական տարերքին , Նար – Դոսը թախիծով դատապարտում է Դավթի բարոյական անկումը :

,, Հոգուն վրա հասավ ,, նովելը արտացոլում է ժամանակաշրջանի ծանր կացությունը , երբ հնի հետ մեկտեղ դեն են նետվում հավատն ու սրբությունը , երբ հինը կործանվում է , բայց նորը հուսալի ոչինչ չէր բերում և ոտնահարում էր մարդկային անհատականությունը :

Սոցիալական ծանր վիճակում էր ապրում ,, Սև փողերի տոկոսը ,, նովելի հերոսուհին : Ամուսնու մահից հետո նա միայնակ էր ապրում , թեև որդի ուներ՝ Արտեմը : Սա էլ հոր նման գող էր և արդեն եղել էր բանտում : Արտեմը հեռացել էր տնից ու պառավ մորը թողել անօգնական : Երբեմն հայտնվում էր ու նորից անհետանում : Մի անգամ նույնիսկ սև փող էր տվել մորը :

Անցել էր ժամանակ : Մի անգամ Արտեմը դարձյալ տուն է գալիս վատ տրամադրությամբ : Մայրը փորձում է մխիթարել որդուն , ասելով ,որ իր տված փողերով նավթ, շաքար ու թեյ է գնել , որպեսզի նրա գալու օրը ճրագը վառի և թեյ պատրաստի : Սակայն որդին չի արձագանքում : Կեսգիշերին Մարանը սև ուրվագիծ է տեսնում, դուռը բացվում է : Մարանը շոշափում է Արտեմի պառկած տեղը : Այն դատարկ էր : Արտեմը չքացել էր : Հավերը ևս անհետացել էին , որոնք Մարանի ապրուստի միակ միջոցն էին : Հավերի ածած ձվերը վաճառելով , Մարանը հաց և կուտ էր գնում : Ասել է, թե հավերը և՛ իրենց էին պահում , և՛ Մարանին :

Սոցիալական ծանր պայմանները մարդուն զրկում են բանականությունից և հասցնում բարոյական անկման :

Որդին՝ գողանալով հավերը , մորը թողնում է բախտի ճմահաճույքին : Մարանը կամաց- կամաց գնում է դեպի անդունդ , դեպի կործանում :

Խավարի ու թշվառության միջավայրում մեծ չարիք են սնահավատությունն ու տգիտությունը , վայրագությունն ու կոպտությունը , հարբեցողությունն ու բարոյական անկումը :

Նար - Դոսն առանց ավելորդաբանության ,ընդամենը մեկ բնութագրով , ,,Հոպոպ,, նովելի հենց սկզբում ամբողջացնում է զինագործ Ասատուրի կերպարը. ,, Զինագործ Ասատուրը , - հնամաշ արխալուղով , կաշե գոտկով , արբեցողությունից ուռած – կարմրած դեմքով մոտ քառասուն տարեկան մի մարդ , որ ամբողջ թաղում ու բազարում հայտնի էր Հոպոպ մականունով... ,, :

Նար – Դոսը նուրբ համեմատություններով և դիտարկումներով բացատրում է զինագործ Ասատուրի մականվան իմաստը. ,, Ամբողջ թաղը Հոպոպ մականունով էր կնքել զինագործ Ասատուրին , ժողովրդական այն առածի հիման վրա , որ ասում է , թե ,, Հոպոպը ինքն էր հոտած , կարծում էր , թե բույնն է հոտած ,, :

Ծանր բնավորություն ուներ 40- ամյա զինագործը , որի ինքնապաշտպանության հիմնական ,, զենքը ,, հայհոյանքների հավաքածուն էր : Բառացիորեն ,, ոչ ոքի հետ չէր հաշտվում ,, , ինչի պատճառով նրա առօրյան ուղեկցվում էր կռվով ու տուրուդմբոցով:

Նար – Դոսը միաժամանակ մատնանշում է Ասատուրի վախկոտությունը թաղի ոստիկանությունից : Անկախ ամեն ինչից ՝ մարդը երկու պատճառով չի կարող շրջանցել հասարակական հարաբերությունների մեջ արմատավորված օրենքի պարտադրանքը : Պատճառներից մեկը վախն է, որը ենթադրում է պատժելիություն , իսկ մյուսը ՝ պարտքի գիտակցումը :

Ի տարբերություն դուրգար Սաքուլի , որը նույնիսկ մահվան մահճում շարունակ մտածում էր վերցրած պարտքը վերադարձնելու հեռանկարների մասին , զինագործ Ասատուրը գրեթե չունի պարտքի գիտակցումը : Նրա մեջ ամուր նստած է վախի պատկերացումը , որից ինքը երբեք չի կարողանում ազատվել , որովհետև բազմիցս հայտնվել էր մեծ - մեծ մկներով լի մութ նկուղում :

Ասատուրը ողբերգական կերպար է , որովհետև նրա բնատուր կոպիտ , անհարմարվող ու անմարդկային բնավորությանն ավելանում են մարդու ձեռքով ստեղծված հարաբերություններն ու օրենքները , որոնք մարդուն իսպառ զրկում են բանականությունից : Նրա բնավորության մեջ խոր արմատներ են ձգել մարդու հետ աշխարհ եկած հոգսն ու դրան դիմակայելու կարողությունը :

Կերպարաստեղծման ընթացքում գրողը բացահայտում է տղամարդու բարոյական պարտքի գիտակցումը և կյանքի նկատմամբ ունեցած ընկալումը, որը սահմանափակվում է կուշտ լինելու հանգամանքով . ,, Մի ձեռքին բռնած էր կես - թունգանոց մի գավ , որի պատերը տարիների ընթացքում սևացել էին կարմիր գինուց , մյուս ձեռքին կարմիր աղլուխի մի կապոց , որի մեջ կար մի քիչ ,, դոշ ,, /ձուկ / , մի քիչ կանաչի , մի կապոց կարմիր բողկ և երկու սպիտակ ,, շոթի ,, , որոնց սուր ծայրերը երկար ականջների պես դուրս էին ցցված աղլուխի կապի արանքներից ,, :

Ասատուրն ամբողջ օրն աշխատում է , քիչ թե շատ վաստակում , բայց չի կարողանում կշտանալ ուտելիքից և հագենալ կարմիր գինուց , ուտում է ՝ առանց կնոջ ու երեխաների մասին անգամ մտածելու : Սովի հալածանքը մարդուն բանականությունից դեպի գազանային բնազդ տանող ամենաուղիղ ու կարճ ճանապարհն է : Հասարակության մեջ ծաղրվող թույլ ու անճարակ գինագործ Ասատուրի ընտանիքում վերածվում է կատարյալ բռնակալի : Ընտանիքը դառնում է այն տեղը , որտեղ նա ՝ որպես տղամարդ , սկսում է ինքնահաստատվել :

Գինագործի թուլակամ բնավորությունը դրսևորվում է ծայրահեղության հասնող կասկածներով : Կինը , շատ լավ իմանալով կյանքի հարատև տառապանքն ու պայքարը , շարունակաբար լվացք է անում հարևանների համար ՝ դրանով ապահովելով իր և մանկահասակ երեխաների հանապազօրյա հացը : Նովելում Ասատուրի կինը անուն չունի այն պատճառով , որովհետև սա ժամանակաշրջանի ընդհանրական տիպ է : Տղամարդը կասկածում է կնոջ հավատարմությանը . ,, Տո՛ , ի՞նչ դես , ի՞նչ դեն , ու՞մ ես ուզում խաբի ... հազիր ասես գնացել իր նրա հետ շնությունն անելու՛ ... ,, :

Նովելում առանձնանում է Ասատուրի ՝ կնոջ հետևից վազելու պատկերը : Թաղի բնակիչները անգուսպ քրքիջով ավելի են լարում Հոպոպի ՝ առանց այդ էլ պրկված նյարդերը :

,, ՈՒ փողոցում , ուր թաղի կանայք և երեխաներն արդեն հավաքվել էին նրանց աղմուկի վրա՝ սովորական տեսարանը դիտելու համար , մարդ ու կին վազում էին - կինը առջևից՝ գավը ձեռքին , մարդը հետևից՝ գլխաբաց , ոտաբոբիկ և ներքնաշորով :

Փողոցում մի անասելի ժխոր էր բարձրացել , կանայք հոհոում էին , երեխաները սուր ծկլթոցներով ,, Հոպոպ ,, էին աղաղակում և սուլում , իսկ թաղի մանրավաճառի խանութի առջև հասուն տղերքը ծիծաղելով բղավում էին. ,, Հասի հա՜, Հոպոպ , հասի հա՜ ... ,, :

Թաղի համար ,, սովորական ,, դարձած տեսարանն ունենում է անսպասելի և ողբերգական ավարտ : Կինը հանդգնում է կոտրել ամուսնու՝ թվացյալ հաջողության միակ գրավականը՝ կարմիր գավը : Գինին ,,լերդացած արյան սև գույնով ,, է ներկում գետինը : Այս պատկերով Նար - Դոսը ակնարկում է , որ շուտով արյուն է թափվելու . ,, Հոպոպը ցնցվեց և կանգ առավ հանկարծ : Նրան թվաց ,թե իրեն տվին գետնովը : Աչքերը մթնեցին : Էլ չիմացավ , թե ինչ է անում , արագորեն կտացավ , մի մեծ քար թոցրեց գետնից և ծայրահեղ կատաղի թափով շպրտեց փախչող կնոջ հետևից ,, :

Նար – Դոսն առանց ավելորդ մանրամասների է ավարտում նովելը : Նույնիսկ չի ասում՝ մահացավ կինը , թե՝ ո՛չ : Գրողը ամեն ինչի մեջ ուղղակիորեն տեսնում է մարդու հոգեկերտվածքի կա՛մ կայացումը , կա՛մ ոչնչացումը : Ասատուրի հոգեկեցվածքին անվերադարձ լքում է ,, մարդ ,, հասկացության ոլորտները , իսկ նովելի վերջին նախադասությունը տեսակարար կշիռ է բերում ամբողջ ողբերգությանը . ,, Հոհոացող փողոցը հանկարծ լռեց ու քարացավ ,, :

Սոցիալ – հոգեբանական ընդգրկումները սարսափելի պատկերների են հասնում ,, Թե ի՞նչ եղավ հետո ,երբ շաբարամանից երկու կտոր շաքար պակասեց ,, նուռավեպում : Ինչպես նախորդ նովելում , այստեղ ևս Նար – Դոսը ուղղակիորեն խոսում է մարդկային այն բնազդի մասին , որի հետ քիչ առնչություն ունեն արտաքին հանգամանքները , կարիքը և հոգսը : Գոբշ կյանքի այս համապատկերում են ներկայացված դրոգապան Ցագորը և նրա կինը՝ Անանը : Եթե Ցագորը

ժամանակի կոպիտ ու բռի բարքերի կրողն է , ապա Անանը ներկայացվում է մարդկային խորը տառապանքով և դրանից ծնվող խուլ հառաչանքներով : Այստեղ ևս բռնության զոհը կինն է:

Ցագորը կատարյալ չարիք է իր կնոջ համար : Վերջինիս կյանքը երկու կտոր շաքարի նման հալվում է ամուսնու և նրա մոր ՝ գիժ Հոռոմսիմի հետ մի հարկի տակ ապրելու ընթացքում : Սոցիալական կյա՞նքն է պատճառը , թե՞ մարդու գազանային բնավորությունը՝ դժվար է ասել : Սակայն հեղինակի առաջ բաշած շաքարի և մարդկային կյանքի զուգակշռում առաջինը բաղցրության փոխարեն դառնություն է բերում և արժենում է մի կնոջ կյանքի : Սարսափելի սպանությունից հետո պակաս կարևոր է դառնում այն , թե ինչ է սպասվում Ցագորին . հեղինակը չի էլ խորանում՝ իրավական մակարդակում պատժվու՞մ է դրոգապանը , թե՞ ոչ : Նար - Դոսին ավելի շատ հետաքրքրում էր երևույթի բարոյական կողմը. ո՞վ է մարդը , ի՞նչ բնագդներ ունի նա, և, որ կարևոր չէ , ինչպե՞ս է նա ընկալում մահը : Անանը մահանում է Ցագորի ,,երկաթից ձուլված ,, հարվածից , իսկ տղամարդու մեջ մնում են ոչ թե ցավն ու ափսոսանքը , այլ բթացած բնագդի հասնող անտարբերությունը . ,, Մի մուշտի տվի , է՛լի , ուրիշ բան խո չեմ արել ,, :

Մարդկային առումով շատ ողբերգական , բայց գեղարվեստական տեսանկյունից մի կատարելություն է ,, Ադամամութին .. նորավեպը : Դիպուկ նկարագրություններով Նար – Դոսը բացահայտում է այն պայմանները , որոնց մեջ ապրում էր Շուշանն իր երեխաների հետ . ,, Այդ տուն կոչվածը մի բավական մեծ խրճիթ էր, որ երբեմն տիրոջ կթան կովերի համար գոմի տեղ էր ծառայում : Ներսն այնքան մութ էր , որ ցերեկվա լույսից մտնողը պետք է մի քանի րոպե սպասեր , մինչև որ բան տեսներ ,, :

Այդ խրճիթը մարդկային հոգու նման մութ էր : Ոչ ոք չի կարող իմանալ ՝ ինչ է կատարվում մարդու ներաշխարհում : Ընտանիքի մայրը ՝ Շուշանը , երկունքի ցավերի մեջ էր. լույս աշխարհ էր բերելու հինգերորդ զավակին , բայց նրա մտքում շարունակ ծագում էին մեկը մյուսի հետ

փոխկապակցված հարցեր. ,, Ո՞ւմ համար, ինչի՞ համար, ի՞նչ օրում էին արդեն ծնվածները, որ մեկն էլ պիտի ավելանար ,, :

Այս հարցերը սկզբում հնչում են հեղինակի կողմից ,որոնք գրողն առանձին հատվածներով մեկնաբանում է : Շուշանի առաջնեկը՝ Սեդրակը, տնից հեռացել էր և չնայած փոքր հասակին՝ արդեն մի քանի անգամ հասցրել էր լինել բանտում : Նար - Դոսը հոգեբանի վարպետությամբ կարողանում է ներկայացնել մանկան հոգեկերտվածքն ու դրանից բխող կենսաձևը : Փոքրիկ երեխաները ,, հնամաշ յափնջու ,, տակ ժամերով սպասում էին իրենց ավագ քրոջը՝ Սոնեին ,որը գնացել էր հաց հայթայթելու : Մանուկներն սպասում էին ոչ այնքան Սոնեին, որքան նրա բերած հացին և սակավ պատահող դեպքերում՝ նաև պանրին. ,, Ցուրտը մոռացան նրանք, որովհետև հացի հոտ առան ,, :

Այս համատարած թշվառությունը աննախադեպ վերջաբան է ունենում : Ադամամուրին Շուշանը խեղդամահ է անում իր նորածին երեխային՝ վստահ լինելով, որ այս մեկի մահը կարող էր փրկել մնացած երեքի հետագա կյանքը: Ճի՞շտ է այսպիսի մոտեցումը, թե՞ ո՛չ, վստահաբար ոչինչ չի կարելի ասել : Թվում է՝ Նար – Դոսն ունի անկողմնակալ դիրքորոշում ժամանակի այսպիսի իրողությունների նկատմամբ, սակայն այս տարօրինակ հանգստությունը պայմանավորված է գրողի յուրօրինակ վարպետությամբ. Նա կարողանում է կառավարել սեփական հույզերն ու զգացմունքները : Սակայն այս բոլորը՝ միայն արտաքուստ : Բոլոր նորավեպերի ենթատեքստերում կարելի է նկատել նուրբ գեղագետի բողոքն ու վիշտը կյանքի մշտնջենական տառապանքի, հոգսաշատ առօրյայի և այս բոլորի ազդեցության տակ ուղղակիորեն քայքայվող մարդկային բարոյականության ու վարքի նկատմամբ :

Անդրադառնալով բարոյական անկման ողբերգությանը հայտնի է դառնում, որ Նար - Դոսը հակված է ընտրելու սոցիալական այն ծայրահեղ պայմանները, որոնք մարդուն զրկում են բանականությունից և հասցնում բարոյական անկման :

Այսպիսով , կարելի է ասել , որ Նար – Դոսի ,, Մեր թաղը ,, ընդհանուր խորագիրը կրող նորավիպաշարի երկերում ամփոփ գեղարվեստականացմամբ յուրօրինակ ընդհանրացում են ստացել մարդու բարոյական նկարագիրը ,կենսաձևը , ինչպես նաև թշվառության մեջ բեկվող մարդկային ճակատագրերն ու հոգեբանությունը :

Օգտագործված գրականություն

1.Գայանե Մկրտչյան- Մեզ ծանոթ և անծանոթ գրողները, Երևան2014

2.Ավետիք Արասխանյան, Աբգար Հովհաննիսյան- Հայ նոր գրականության պատմություն, 4-րդ հատոր

3.Զավեն Ավետիսյան, Վլադիմիր Կիրակոսյան – Գրականության դասագիրք 8-րդ դասարանի համար,2007թ

4.Դավիթ Գասպարյան –Գրականության դասագիրք 8-րդ դասարանի համար, 2012թ